



ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՔԱՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՈՐ ԱՄՍԱԳԻՐ Ի ՄԵԼԲՈՒՐՆ



Հայ մշակույթի անդամները հարստացավ մի ամսագրով ևս՝ «Ամսագիր Հայ Առաքելական Եկեղեցու Մեկուրն»-ով, Մայր Աթոռ և էջմիածինը գոհունակությամբ ողջունում է Մեկուրնում նոր լույս տեսնող «Հույս» ամսագիրը, որի պատասխանատուն Ոսկան արեղա Գալփականն է, Ամսաթիվը լույս է տեսնել 1966 թվականի հուլիս ամսից, և որի շորհ հա-

մարները ահա մեր ձեռքի տակ են։ «Հույս»-ը ավստրալահայ գաղութի երկրորդ պարբերաթերթն է, «Հույս»-ի կրտսեր եղբայրը, որը տասնմեկ տարիներ է լինել լույս է տեսնում անխափան՝ ժրաշան հովիվ արժանապատիվ Տ. Արամայիս քահ. Միրզոյանի խմբագրությամբ։

Եթե անցյալ՝ 19-րդ դարի 50-ական թվականներին ընդամենը 50 հոգիանոց Ռանգունի հայ գաղութը կարողացել էր հրատարակել իր երկշաբաթաթերթը՝ «Ուսումնասեր»-ը, Գալստյանի ղեկավարությամբ, որը հրատարակվեց մոտ 15 տարի՝ մինչև 1853 թվականը, պարզ է, որ ավստրալահայ նոր կաղմվող գաղութը, որն ավելի շատ թվով հայեր ունի, քան ամբողջ Հեռավոր Արևելքի ու Հնդկաստանի հայերը միասին վերցրած, կարիքն ունի իր ամսագրին։

«Հույս»-ի խմբագիր հ. Ոսկան արեղա Գալփականը, չնայած իր բազմադրաղ հովվական և ազգային աշխատանքներին, մեծ սիրով ու նույնչափ հայրենասիրությամբ, ինչպես այն երևում է հրատարակած ամսագրից, փարվել է այս շնորհակալ աշխատանքին։

Հայր սուրբը Ավստրալիա իր հովվական պաշտոնին կանչվել է մոտ երեք տարի՝ առաջ, և որը մեծ սիրով տանում է մինչև այսօր։ «Հույս»-ը նրա մասին 1966 թ. հուլիս—օգոստոս միացյալ համարում գրուի էր. «Մեկուրն մեր քույր եկեղեցիին հետ մեր հարաբերությունները եղան միշտ սիրալիր։ Այդ գաղութը ևս ունեցավ իր հովիվը՝ հանձին Տ. Ոսկան արզ. Գալփականի, էջմիածնի նոր սերունդին, որ ժրաշանորեն կաշխատի կաղմակերպել փոքր այդ գաղութին հոգևոր և ազգային կյանքը»։

Վերջերս եղած մարդահամարի համաձայն Սիդնեյում ապրում են 4000 հայ, իսկ Մեկուրնում՝ 1500 («Սո-

«Կետական Հայաստան» օրաթերթ, 4 հունվարի 1967 թ.,
թ. 4):

Ահա այսպիսի կարեոր դադարձում անսպասման պետք
Գր հրատարակվեի «Հուլյս»-ը՝ գիտակցութեամբ, եկե-
նիցեապարտութեամբ, իսկական հովիւի նմանութեամբ ե հայ-
մանաւորութեամբ գիւղում մի փոքրիկ խումբ մարդ-
կանց միջոցով:

«Հուլյոս» ամսագիրն արտաքինից ստվորական կապույտ գույնի է, շապիկը տպագիր դարձրաւուն, իսկ ձեռքը ամսագիրը՝ խմորատոպ: Կազմի ունի գեղեցիկ ամաշկական դարձանկարներով ուղղանկյուն շրջանակով Միծատառերով և նուշնայն շատ գեղեցիկ դարձերով շարժված է ամսագրի անուրը՝ «Յոլյոս»: Եվ Հենց անմիջապակն սրա վերեւում է, որ «Ամսագիր Հայ Առաքելական եկեղեցւոյ Մեկուրն» կարդում ենք: Կեսից ներքե Մեղալիտնաձև շրջանակի մեջ Հազիական նստում է Եւրոյր Միսրոպ Մաշտոցը, ծնկներին Աստվածաշունչ Եւրոյր Գիրքը՝ բռնած ձախ ձեռքով, և աջից՝ իր զտեղծած Հայ ալրուրենի տախտակը բռնած աջ ձեռքով: Միջը շրջանակի տակը միծատառերով գրված է. «Մեկուրն Մաշտոց»: Իսկ վերից՝ ձախ կողմից, Հայերենով՝ «Ամսագրի Պատասխանատու Ոսկան Արեղա Գալիական»: Նուշնը նաև մեղալիտնաձև շրջանակի աջ կողմից՝ անդերերենով՝ Մյուս Հայտարարութլոյունները կամ Վերնագրերը ևս, ինչ որ Հայերենն է՝ վերնագրերը, և լայն, գրված է անդերերենով:

Թերթիկով ամառաբերը (Հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսները), նկատում ենք, որ բոլոր ամառներն էլ բաղկացած են 20 էջից՝ հայերեն և անգլերեն բաժիններով: Առաջին համարը բացվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վաղգան Ա-ի 11 մարտի 1966 թ. սրբառառ կոնդակով՝ հայերեն Աստվածաշնչի հատորին տպագրուված 300-ամյակի տարեդարձի առթիվ տրված, և մի բանաստեղծության՝ ստորագրված Վ. Յրիցյանի կողմից «Հուլիս» վերնագրով:

«Մեր խոսքը» խմբագրականում խոսվում է այն մասին, թե ինչու այս նոր ամսագրի անունը «Հույս» է դրվել «Հեռուս» ենք գրել, որովհետև հեռավոր այս երկրում կորցրած լինելով է ապագային տակավ առ տակավ, ավելի ու ավելի կորցնելու արհամարիքի հույսը կանգնած, զոհն շնք ուզում կորցնել մեր հույսը, հույսը այն բանի, որ պիտի շնոռանանք հույս Աստույծը, պիտի շնոռանանք Թորգոմա տան զավակները լինելնին և պիտի շնոռանանք Մեսրոպաշունը Ոսկեդիրիկ այրուբներն: Արդարև, հայր սուրբը ճիշտ է նկատում, որ «Ձի յուսով պարտի որ սեմմանէն՝ սերմանել հւ որ կատան յուսով վայելել» (Ա. Կորնթ. Թ. 10):

«Իմ խոսքը» շարադրված է հավատարով և հայրենիքի կարոտ սրտի հայրենասիրտությամբ: Գծվար թե այն չվարակի իր շերտովյամբ հայ ընթերցողների հոգին. չէ՞ որ «շատ զեղեցիկ երկրներ կան», — գրում է հայր սուրբը, — բայց ուրիշ է Հայաստանը, շատ երկնասլաց լուսնի կան, բայց ուրիշ է Աբարաատը, շատ սուրբ տաճարների կան, բայց ուրիշ է էջմիածինը:

Այնուհետև խմբադրականը անդրադառնում է հայ արժեքները սփյուռքում պահպանելու ձևերին: Բայց նկատում է նաև, որ մայր հայրենիքն է միակ և հու-

սպիչ հեղափոխությունների միջոցով ժամանակավոր պահանջներ, հանգրվան հուսովի, որ կարող է իր ստացածը ոչ միայն պահել, այլև միջազգային արժեքի հասցնել: «Հուլիս»-ը լավատես է և այդ լավատեսությամբ է իր դորձը շարունակում՝ «նպատակ ժողովրդի գոհն մասամբ բավարարել մեր ժողովրդի ընկերացուրելովան պահանջը, ամբողջ կախարարությամբ որեւէ օրափերթ կամ շաբաթափերթ չհրատարակվելու պատճառով»: Այնուհետև հայտնում է, թե ինքը մտադրել է իր եկեղեցական ամսագիր լինելու սահմաններից դուրս գալ, որպեսզի ոչ եկեղեցական հոգևոր և ազգային պահանջները ևս բավարարի:

Խմբագրականն ավարտվում է հայ ժողովրդի կողմից բազմաթիվելու հույսով և ԶԹ սաղմոսի հետևյալ խոսքերով. «Զորքն ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, և զզորքն ձեռաց մերոց հաջողեա մեզ»:

Ամենամեծ հողվածք, որ ստորագրված է Վ. Երեց-
յանի հողմից, կրում է «Ազգապահպանումն և մենք»
խորագիրը, արտահայտված չորս համարների մեջ,
բաղկացած է ինն էջից: Հողվածագիրք մեծ մտահոգու-
թյուն է ցուցաբերում դեպի ուժացումը, ուստի իր հող-
վածք չարագրել է մեծ հայրենասիրությամբ:

Հողովածագիրը երբ խոսում է ազգապահպանության մասին, նկատի ունի սփյուռքահայությունը, «որ դեռ տեղաշարժի մեջ է և որուն ճակատագիրը կորուստ պիտի բլլա, եթե ձևը չառնվին փրկության ամբարտակ բոլոր միջոցները»։ Իսկ փրկության միակ ելքը նա համարում է ներգաղթը։ Հայ մշակու համար,— եղբա-կացե՛նում է հողովածագիրը,— պիտի հողիններ կապված մեա հայ եկեղեցուն, որը «ազգային-կրոնական կեդ-րոնն է յուրաքանչյուր գաղութի, ուժացման ալիքների ղեմ»։

Հայապահպանության երրորդ ազդեցիկ հայկական դպրոցն է, որը հայ ոգու տնկարանն է, և որն ապրում է միշտ «հզարաբացած» հայ հեկեղեցու հետ: Ուստի ամեն մի հայ պարտավոր է իր մայրենի լեզուն իմանալ, զրի ու կարող միտքով անել լեզվով և ազգայնությամբ անկրեւելի: Իհարկում, դպրոցը կողքին անհրաժեշտ են մշտադիմացի ուրիշ հիմնարկներ: Կա:

«Պետազուխտ հայր բռնվոր չէ,— զարգացնում է իր միտքը հողավածադիրը,— և եկեղեցու, դպրոցի եղող-բլին համահավասար գեոմիի վրա կու գա հայրենիքի սերը»։ Եթե մենք հայրենիք չունենանք, մեր բոլոր հույսերի իրականության հանգրվանը, որ Հայաստանը է՛նչ Սրարանի նայվածքի տակ, նշանակում է, որ մենք բնկած ենք մի օվկիանի եզր, որ չի նրկում մեր ուղ-դուլթյունը, չունենք նպատակ, ամեն կողմ խավար է, չկա վարստը։ Ուստի ամենամեծ թե՛նքը կգործեն բոլոր անտեր, որ գիտակցորեն կամ անգիտակ կուղեն տապա-հաբի սերը հանգիստ հայրենիքի, կուղեն մայրենի ծա-նաբունեն կտրել ճշուղերը, որ դոսանան։ «Հայրենիքի սերը,—շեշտու է վ. Բերցյանը,—միշտ պետք է վստ պահեն և չխողով որ մարի»։

Հովիս ամսվա համարում՝ «Ամսվա պատմվածքը»
բաժնում, Գ. Գաղաղյանը հանդես է եկել մի պատմ-
վածքով՝ «Չալվհին»՝ «Արշակ Բ» օպերայի հեղինակ,
հայտնի երգահան Տիգրան Չոխաշյանի մասին գրված:

Այն կարգացվում է մեծ հետաքրքրությամբ:

Մանոթի և սիրված բանաստեղծ Ժագ Հակոբյանը երկու հաջորդական համարներում ունի «Օրհնական, Հիսուս Աննաման» վերնագիրը կրող բանաստեղծությունը: Այն գրավում է շուրջ հինգ մեծագիր էջ: Հեղինակը այստեղ բանաստեղծական նոր գյուտերով ու արտահայտչական նոր եղանակներով հաջորդապես և հաջորդապես նկարագրում է Քրիստոսի արտաքինը, աչքերի կապույտի մեջ ծածանվող տեսիլքները, այնուհետև գալիլիական հրաշալի բնությունը, նրա բարի ոտքերը, որոնք քայլել են երկնքի բոլոր ճանապարհների ու մարդոց սրտերի վրա, ոտքեր, որ աստղերից լույս բերին, աստղերից... զենեցկությունը դրոշմեցին աշխարհին, հողին, որովհետև ուրախության, խաղաղության ոտքեր էին:

Ամսաթերթի եռանգուն մասնակիցներից մեկը՝ Աստուծոյի համար, ունի կարևոր հոդվածներ հայերեն և անգլերեն լեզուներով: Սեպտեմբեր ամսվա համարում նա ունի «Եմաստակությունը հայոց մեջ» խորագիրը կրող մի հոդված:

Նա հրավեր է կարդում զոտեպնդվելու մեր եկեղեցու շուրջ սուրբ էջմիածնի հովանու տակ ու հոգով հայ մնալու համար: Այդ գիտակցությամբ են գործում, վկայում է նա, համայնքի և եկեղեցական խորհրդի անդամները և այլ միություններ Մեյրուրում:

Ա. Էմիրջիհանի երկրորդ հոդվածը՝ «Եմ անդրդվելի համոզումը», վարակում է իր հայրենասիրությամբ ու սրտացավությամբ, իսկ նրա երրորդ հոդվածը կրում է «Գնահատել գիտենալ» խորագիրը:

Հնդկաստանի և Հնուավոր Արևելքի հայրապետական պատմիրակի տ. Հայկազուն արք. Աբրահամյանը 1964 թ. երբ այցելել էր Ավստրալիա, այնտեղ հիմնել էր «Հայ եկեղեցվո Նորտասարգ Միություն»-ը: Այս կազմակերպությունը շատ մոտիկից զբաղվել է համայնքի հոգևոր կյանքով և տվել երեք հաջողված թատերգություն, պարահանդեսներ և օգնել եկեղեցական խորհրդի և տիկնանց հանձնախմբերի բոլոր ելույթներին և մանավանդ «Հույս» ամսաթերթի տպագրության բարոյական և նյութական օգնությամբ:

Շատ հետաքրքրությամբ են կարգացվում և իրենց հայրենասիրությամբ վարակում են Զարուհի Գոլուխանյանին և Տիգրան Պետրոսյանին նվիրված հոդվածները:

Օգոստոսին, Վերափոխման տոնի օրը, նշվել է Մեկրուրին սուրբ Աստվածածին եկեղեցու անվանակոչության տոնախմբությունը: Այսպես է նաև հոգվածի վերնագիրը, որը ստորագրել է Ս. Տեր-Ավետիսյանը, և այն դրաղեցնում է մեկուկես էջ: Այդ եկեղեցին շուրջ տարվա կյանք ունի մային, որը գնվել է «Ափ մը անձնվեր ու գիտակից հայ անձներու զոհողությամբ»:

1966 թ. սեպտեմբերի 30-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը բոլորեց իր կյանքի 58-րդ և

հոկտեմբերին՝ իր զահակալության 11-րդ տարեդարձները: Այս ուրախ առիթներով տեղի են ունեցել հայրապետական մաղթանքներ: Ամսաթերթի հոկտեմբեր ամսվա տողերը զխաղաղապես հատկացված են այդ նշանավոր տարեդարձներին: Ոսկան արեղան «Մեր խոսքը» խմբագրականով, Վ. Նրիցյանն՝ «Շինարար Հայրապետը» և Ա. Էմիրջիհանը իր անգլերեն հոդվածներով հանդես են եկել: Հոդվածներում ջերմորեն խոսվում է Հայոց Հայրապետի զահակալության տալիս իրենցին կատարված եկեղեցական, մշակութային, շինարարական մեծ դրոճերի մասին:

Բոլոր համարներն ունեն «զեղեցիկ մտքեր» կամ «իմաստուն խոսքեր», «զաղափարի շիթեր», «տխրույնի», «ծանուցում», «մամանակացույց եկեղեցական պաշտաման», «կոչ» և «Հայտարարություն», «Մանուրություն», «Ազգ», «Հույր» և այլ բաժիններ՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Հետաքրքիր է նաև «Հայկական անուններով նավեր» փոքրիկ բաժինը ևս, որ խոսվում է այն մասին, թե ինչքան սովետական նավեր, որանք կրում են «Նրեան», «Արմենիա», «Արարատ», «Լեհիսական» անունները, նավարկում են մինչև հեռավոր Ավստրալիա, Հնդկաստան, Վիետնամ, Բիրմա, և որոնցով ինչքան գրոսաշրջիկներ, ուխտավորներ և հայրենադարձներ զալիս են մայր հայրենիք:

«Հույս»-ը իր հոկտեմբերի համարի՝ պատանիների և երիտանների համար լրացուցիչ իր մեծության չափի կեսով ունի նաև մի միջուկ՝ «Պատանիս» խորագրով, զից թերթնախ Այն վարդազույն է և պատկերազարդ: Այնտեղ ևս կան հայերեն և անգլերեն բաժիններ: Առաջին էջն իսկ կազմն է, ուր տրված է առասպելական Հայկի և Բելի պատմությունը՝ մեկուկես էջով, անգլերեն, Հայկ հսկայի հաղթական նկարով: Հետո զալիս են մյուս նկարները, խնդիր-լուծումները, «զծագրության պարզեակոր մրցում»-ը մեծագիր էջը 4—22 տարեկանների համար, և ամենը իրենց տարիքի բաժիններով, «ներկելու մրցում 4—8 տարեկան»-ը, Հ. Ափաբյանի «նաչրան»-ը և այլն:

Մենք ուշադիր կարդացինք և տեսանք, որ մեծ են «Հույս»-ի երազներն ու մտահոգությունները զաղովի համար: Նա լույս էլ է: Արդեն արձագանքները շատ են և մենք էլ միանում ենք դրանց մեր շնորհավորանքներով, ուրախություններով և զնահատանքի խոսքով:

«Հույս»-ը մեր սրտին մոտ է, և մենք միշտ նրա ճանապարհը պիտի սպասենք, որ այնտեղից լսենք նաև մեր հեռավոր եղբայրների ձայնը, մեր հայրենակարոտ հարազատների պանդուխտ սրտի թրթռացումը: Այն կամուրջ է նաև Ավստրալիայի հայերի և մայր հայրենիքի ու ի. էջմիածնի միջև նետված:

Թող միշտ ուղիղ լինի «Հույս»-ի ճամփան, հաջող և խանդավաղ՝ ի փառս Հայաստանայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և հայ մշակույթի:

